# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Ինմեդ ՍՊԸ-ն ՉՄՄԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-30/26 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 6 | Չունլի (Chunli), | Չունլի (Chunli), | Չունլի (Chunli), | Չունլի (Chunli), | Չափաբաժին 6 Տոտալ ոչ ցեմենտային էնդոպրոթեզ, որը բաղկացած է հետևյալ կոմպոնենտներից. Տոտալ ոչ ցեմենտային էնդոպրոթեզ, 1. ազդրոսկրի ոչ ցեմենտային ոտիկ - էնդոպրոթեզ կոնք-ազդրային հոդի տոտալ, ոչ ցեմենտային ֆիքսացիայի կոմպոնենտ է, պատրաստման նյութը` Ti6Al4V, ծածկույթը` ոտիկի ամբողջ մակերեսը բացի վզիկից պատված է կենսաակտիվ նյութերով - մաքուր տիտանով և հիդրոքսիապատիտով, լայնական հատույթը` օվալաձև, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | անկյունը՝ 135 աստիճան, վզիկի երկարությունը՝ 40,5մմ, ունի 11 (տասնմեկ) չափ (N8, N9, N10, N11,N12, N13, N14, N15, N16, N17, N17+), որոնք տարբերվում են ըստ երկարության և օֆսեթի՝ համապատասխանաբար. 115/38,4; 130/38,9; 140/39,8; 145/40,7; 150/41,3; 155/42,2; 160/43,1; 165/44; 170/44,8; 180/45,6; 190/46,3: Առկա հորիզոնական ակոսներով պրոքսիմալ աստիճանի երկրաչափությունը շրջագծային լարվածությունները վերածում է սեղմիչ լարվածությունների, իսկ դիստալ հատվածում առկա ուղղահայաց ակոսները՝ պտտական կայունությունն են բարձրացնում: 2. Ազդրոսկրի գլխիկ - պատրաստման նյութը՝ CoCrMo, ծածկույթը՝ ամբողջ մակերեսը փայլեցրած է, դիամետրը գլխիկի 28մմ-ից մինչև 36մմ, քայլը փոքր կամ հավասար 4մմ, գլխիկի կոնուսը՝ 12/14մմ, ազդրոսկրի գլխիկն ունի 20 (քսան) չափ համապատասխանաբար. 22/0; 22/3; 22/6; 22/9, արտաքին տրամագիծը 22մմ, 28/-6; 28/-3; 28/0; 28/3; 28/6; 28/9; արտաքին |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | տրամագիծը 28մմ, 32/-6; 32/-3; 32/0; 32/3; 32/6, արտաքին տրամագիծը 32մմ, 36/-6; 36/-3; 36/0; 36/3; 36/6. արտաքին տրամագիծը 36 մմ: 3. Քացախափոսային գավաթ ոչ ցեմենտային, պատրաստման նյութը՝ Ti6Al4V, ծածկույթը տրաբեկուլյար տիտան, որն ստացվել է 3D-CAD թվային մոդելներից, UHMWPE ներդիրները, բացի կոնաձև միացումից, ամրանում են գավաթի մեջ՝ շնորհիվ հատուկ էպիցիկլոիդային համակարգի միջոցով, որը ապահովում, պահպանում է պտտման կայունություն: Ունի 10 (տաս) չափ, քացախափոսային գավաթի վրա առկա են 3-ից 5 հատ անցք քացախափոսային պտուտակների համար, համապատասխանաբար ըստ չափսերի և արտաքին տրամագծի՝ 46/48; 48/50; 50/52; 52/54; 54/56; 58/60; 60/62; 62/64; 64/66: 4. Քացախափոսային գավաթի ներդիր, պատրաստման նյութը վերջին սերնդի գերբարձր մոլեկուլային քաշով պոլիէթիլեն (GUR1020)՝ առանց կալցիումի ստեարատի, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | խաչաձև կապով (UHMWPE), ներդիրի վրա առկա է 20 աստիճանի հակատեղակայում, ունի 6 (վեց) չափ, համապատասխան ըստ չափսերի արտաքին տրամագծի և համատեղելի գլխիկի չափի՝ 44/35/28; 46/37/28; 48/39/32; 52/44/36; 56/48/36; 62/52/36: Բոլոր կոմպոնենտները կլինեն միևնույն արտադրողի կողմից արտադրված, որպեսզի ապահովվի նրանց ճշգրիտ համատեղելիությունը միմյանց հետ։ Կոմպոնենտների տեղադրման համար մատակարարը մատակարարման ամբողջ ժամանակահատվածի համար անհատույց կապահովի էնդոպրոթեզավորման համար անհրաժեշտ ուժային գործիքներով, մասնավորապես. օրթոպեդիկ սղոցով, կաննուլացված օրթոպեդիկ շաղափով: Պարտադիր պայման է CE MARK կամ FDA որակի վկայականների առկայություն, արտադրողի կողմից տրվող համապատասխանության հավաստագրի (ավտորիզացիոն նամակի) և ծագման սերտիֆիկատի առկայությունը։ Յուրաքանչյուր |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | վիրահատության ժամանակ մատակարարը կապահովել պահանջվող իմպլանտի բոլոր չափերի հասանելիությունը: Մատակարարումը կկատարվի 24/7 ռեժիմով՝ առավելագույնը 6 (վեց) ժամվա ընթացքում: Պատվիրատուն իր կողմից, նախապես ֆիքսված էլեկտրոնային փոստի միջոցով, ուղարկված գրավոր պահանջում նշում է մատակարարման ենթակա անհրաժեշտ իմպլանտների անվանումը, քանակը, չափը, տեսակը, պատրաստման նյութը: Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը կներկայացվի ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը կլուծվի: |

## **ПОЛНОЕ ОПИСАНИЕ**

**предлагаемого товара**

ООО Инмед в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՉՄՄԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-30/26 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 6 | | | | | |